


ձեւեր ունին՝ անոր համար է որ ժողովրդ-
դեան բերնին մէջ անխտիր կու գան անոնք,
կամ իրենց գրչին տակ նրբերանգներ առած
են, որով լեզուն աւելի որոշ կ'ըլլայ՝:

Եւ ի՞նչ Միսրորեան լեզուն մերթ սահ-
մաններու մեծ ճշդութիւն մը ունի, անոր
համար է որ Միսրորեան դպրոցը գիտնա-
կան լեզու, դասակարգային լեզու չէ ու-
զած ստեղծել. ուզած է ըլլալ ազգային
լեզուն, ժողովրդեան լեզուն, վէպի և պատ-
մութեան լեզուն: Ըմբռնած են որ, ինչպէս
Հայաստանի հողին վրայ, լեզուին վրայ
ալ իրաւունք ունէր թէ ուսմիկ և թէ ազ-
նուակնան դասակարգը. անոնք ազգային
զգացմանց բովը կազմած են՝ ուր ամէն
կարգերն ու սերունդները կրնան երթալ
իրենց մտքի ու սրտի բացատրութիւնները
գտնել:

Եւ հայ հոգին եղած է պարզ, պերճ,
հզօր, կենսաբուլիս, գէթ ասոնք են ընդ-
հանուր նկարագիրները այն լեզուին որով
խօսած է Սահակ Պարթևի ու Իզնիկ կող-
բացւոյն գրիչներուն տակ:

Հ. Ն. ԱՆԻՐԵԱՆՆ

Շարայարեղի



Ս. ԲԱՐՍԷԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՑ

« Յարազս վեցօրեայ առօրեայ արարչութեան »

Մեր երախտաճատոյց ճարք առ զբաւորակամ
բարեբարս մախմեաց, ճրատարակելով 1880իմ ի
վեմետիկ Ս. Բարսէի մատեր « Յարազս վեցօրեայ
առօրեայ արարչութեան », առ ի լզոյէ այն ծեռագրաց,
բաւականացիր եմ իրիցմ ունեցած մի օրինակովը,
որում ճամար կը գրեմ. « Թէպէտ ոչ չին և ոչ ըն-
տիւր գրչութիւմ, այլ վրիպակագիր քաղու՜մ ուրեք
և յամբմտութեմէ աղաւաղեալ » : Տպագրողը բա-
զու՜մ մտտութեամբ և զգուշութեամբ շատ սխալ-
մեր դուրս ճամբեր և շատ արդարադամներ ուղղեր

1. Այսպէս խոր և ճոր միւնայն ժայնին ենթածեւեր
են պարագայէն. որոնցմէ իւր զրով չնուածք վանի բար-
բառին ըլլալու է : Բայց Միսրորեան դպրոցը խորին
վերացական իմաստ ալ տուած է, մինչ ճորը պարզա-
պէս նիւթական իմաստ ունի. Ուրիշ դպրոցներ խոր բառին
այնպիսի գործածութիւն ունին, զոր Միսրորեան դպրոցը

եմ, ծշամակելով իւրքքամիւր իջի ստորին ծա-
մօթութիւններ. Այլ և ճամբերով այսու կ'աւելցնեն.
« Եսկայն Յարազս տակաւին ոչ սակաւ մթութիւն և երկ-
բայութիւն աստ և անդ » : Սխալմբը թերեւս աւելի
շուտ կարիքի էր ուղղել և ստուգել յոյժ բնագրով-
բայց այս կողմէմ ամմիթթար մտացեր եմ տպա-
գրողը, որովհետեւ ճայնեմ թարգմանութիւնը
ազատ և ըստ ճամոյն ընդլայնած է բնագրի խօս-
քերը և երբեմն մասն իմաստները, այնքան զա-
մագամութեամբ՝ որ ճամմատարողները կը գրեմ
թէ շատ տեղ « անմարթ էր նշմարել զնա ընդ չնտս
շաւազս բնագրին » :

Արդ յետ այսքան զգուշարող քննութեամ այն-
պիսի տպագրողաց որք ոչ միայն քան զվեզ ա-
ւելի միտուէ էին ճայնեմ գիտութեամ, այլ և ամ-
վիճելի առաւելութեամբ ուսումնասիրութեամ և
ճամմատարութեամ յոյժ բնագրիմ՝ ճագրի թէ մե-
րիկ էր մեզ ամղրէմ պրպտեւ և ուղղել սխալ-
մեր, փորձելով վերակազմել իմաստը և քաղը,
այնպէս ինչպէս երբեմն եղած ըլլալու էր բնա-
գրիմ մէջ. Թէ ո՞րքան չափով յաջողած եմք մեր
ծեռարկիմ մէջ, ճեղքմակաւոր քննադատութիւն
զայն մեզ կը հաւատտէ ամուշտ. Մակայն բնդ
սմիմ իրաւ ճամմարիմք ասել միաբան տպագրի
յառաջաբանութեամ՝ որ « մնացիմ տակաւին, ոչ
թէ սակաւ, այլ բազում մթութիւնք և երկբայու-
թիւնք » զորս ամուշտ ուրիշ ժամանակ քաջ-
ուշիմ միտք և գրիչք պիտի ուղղեն և լրացնեն :
Մատեմատիկական ցուցակ մը կարող պիտի
լըլլամք կազմել, որովհետեւ կը մաքնմամբ միակ
գրեմ մը՝ այս միւլթիմ վրայ. Նորայր Բուզադա-
ցոյ « Բառաքնութիւն » ցօլիս. 1880, էջ 61 :

Էջ 1. տող 1. « Լուաք ի գիր՝ զի ասէ.
ի սկզբանէ արար Աստուած զերկին և զեր-
կիր. Բանի գայելու է և գեղեցիկ սկիզբն,
այս որ եղեւ հաստատութեան աշխարհիս
լինելով » :

Ուղղ. « Բանի՛ գայելու է և գեղեցիկ
սկիզբն այս, որ եղեւ » :

Ս. Բարսէի հետ ամենայն ոք կարէ
սքանչանալ Ս. Գրոց այնքան պարզ և
այնքան վսեմ սկզբնաւորութեան վրայ, և
իրեն արդիւնք իւր զարմացման պիտի
գրէր. « Բանի՛ գայելու է և գեղեցիկ են »
սուրբ գրոց խօսքերը :

բնաւ չի ներք : Հիւնեարան դպրոցն խորնացի կը
գրէ « Անկանի (Արտաւազ) ի խոր ինչ մեծ » : Բ. 61.
« Պեղեւն երկուս խորս » : « Բերեւն թագեցին ի նոյն
խորս » : « Հրամայէ զսայրորդն ի վերայ խորոյն կա-
խել զգայա՞ծ » խոր. Գ. 32 :

Հմտ. « Բանի՛ գեղեցիկ է յօրինուած կարգին , զի նախ սկիզբն եղաւ լինելոյ արարածոյն » էջ 5, տող 6 :

Այս հիացման պատճառական պատասխանը իսկոյն կը հետեւի . « Բանզի զիմորդ ոչ ցանկալի է երեւելեացն սկիզբնս այս » : Անդ տող 5 :

Էջ 1, տող 3. « Այնու՛ որ առնի պատմել զնմանէ » :

Ուղղ. « Որ առնո » :

Էջ 1, տող 5. « Բանզի զիմորդ ոչ ցանկալի է երեւելեացն սկիզբն այս զոր եղի վերայ նոցա կանխաւ քանիսն իւրով զնա » :

Ուղղ. Բանիսն իորով Աստուած . ըստ այնմ թէ Աստուած Բանիսն ստեղծեց զաշխարհս, ուստի և ի սկզբան պատմութեան արարչութեան արարածոց իւր անունը պատշաճապէս զրաւ անոնց վրայ « ի սկզբնէն զարար Աստուած » որպէս զի մարդիկ չմոլորին փոխադրելով իսուցերով թէ աշխարհս « ինքն յաճե՛ն ցտա » :

« Զի միտս արժանաւորս Աստուծոյ առցէ ի վերայ բանիցն՝ որ ասացին » :

Ուղղ. « որ ասացան » իբր նախակարգեալ ի գլուխն . կամ ասացիք, այն՝ ինչ որ ինքն պատրաստուած էր ընել արարածոց մեկնութիւնը :

Էջ 2, տող 6. « Թէպէտ և իցէ ի խորս գիտութեան օրինակազրին, որպէս և վայել իցէ, չկարիցեմք հասանել վասն տկարութեան մտաց մերոց » :

Ուղղ. « իցէ » :

Որչափ ոք ջանայ իջնել օրինակազրի, Ս. Գրոց խորը, սակայն մեր մտաց տկարութեան պատճառաւ, անհասկանալի կը մնայ մեզ համար :

« Մովսէս էր օրինադիրն պատգամացն՝ զոր լուաք » :

Ուղղ. « օրինացիրն » որ է գրիչը, զի Մովսէս զրեց պատգամները, ոչ թէ զնորդ եղաւ :

Հմտ. « Եւ լուսաւորեաց զնա ժամանակազրին արարչութեան (արարչի) աշխարհիս » . էջ 5, տող 3 :

Էջ 2, տող 21. « Որ զմեծ պատիւ

զսպասս Թագաւորութեան՝ մեծութեամբ իւրով մտացն անարգէր և առ ի խոնարհութեան որդեց իւրոյ ազգին փութայր » :

Ուղղ. « առ ի խոնարհութեան » :

Թագաւորական փառաց բարձրութենէն ղէպ ի խոնարհութեան կարելի է իջնել — ղէպ ի նուաստութիւն և նեղութիւն՝ յորում էին իւրայեկացիք :

« Եւ անհոգս եղեռնարեան գերծեալ ապրէր ի բազմապատիր զքոսանաց » :

Ուղղ. « անհոգս եղեալ ? » :

Հեղինակս արդեօք ըսել կ'ուզէ թէ եւ ղեւութենէն վերջը, այսինքն մարդասպանութենէն՝ այլ եւս վրան չէր մտածեր, այլ անհոգ էր, խիղճը զինքը չէր տանջեր : Կարելի է ուրիշ կերպով մ'ալ հասկընալ . փախչելով անապատ և արցունհաս բազմապատիր հրապուրանքներէն զերծ, աշխարհի փորձանքներէն հեռու, անհոգ եղած, որ է հանգստացած, խաղաղած՝ քառասնամայ ժամանակ, արժանի եղաւ այնուհետեւ « մշտնջենաւորութեան ի տեսիլս մեծամեծս » յորոց զխաւորն էր արարչութեան պատմագրութիւնը :

Էջ 3, տող 13. « Թէ լինիցի մարգարէութիւն ի մէջ ձեր, ես Տէր տեսիլամբ յայտնիմ ձեզ և երազօք խօսիմ, և ոչ այդպէս, որպէս ծառայն իմ Մովսէս » :

Ուղղ. « առ ծառայն իմ » :

Այլոց տեսիլամբ և երազով, իսկ Մովսէսի հետ ղէմ յանդիման և բերան ի բերան կը խօսէր Աստուած :

Էջ 7, տող 7. « Եւ յայտ է թէ որ ինչ ժամանակաւ սկսան՝ հարկ է թէ ժամանակաւ կատարեսցին » :

Ուղղ. « սկսան » :

Եթէ աշխարհս եզակի ժամանակաւ սկիզբն ունեցաւ, հարկ է որ ժամանակով եւս վերջանայ :

« Այլ այսպիսի ճշմարտութեան ընդունայնացան միտք իւրեանց » :

Ուղղ. « Ան այսպիսի ճշմարտութիւն » :

Այն ճշմարտութեան հանդէպ՝ թէ որ ինչ մասունքներէ կազմուած է եղծանելի է և ոչ արարիլ՝ ընդունայնացան և խաւարեցան հեթանոս իմաստնոց մտքերը :

էջ 9. տող 2. « Թէ փոխելոց է աշխարհս, վասն հանդերձելոց իրացն՝ որ լինելոցն են մեզ »:

Ուղղ. ի մեզ:

Փոխութիւնը մեր մէջ պիտի լինի, և ոչ թէ մեզ համար:

էջ 10. տող 22. « Ասի դարձեալ սկիզբն սկստածի իրաց ինչ՝ որ առնուցոսն սկիզբն լինել . . . Ասի դարձեալ սկիզբն և այնմ՝ զոր ինչ խորհիցիմք ներգործել, կամ արկանել հիմն տան կամ հարկանել բուռն զգործս (զգործոյ) տախտակամած յատակաց նաւի, որ է սկիզբն կոտածոյ կազմութեան նաւին . . . Ասի դարձեալ սկիզբն և այլոց արուեստից ճարտարութեան ըստ իմաստութեանն փեսելիքի որ եղև զարդ խորանին վկայութեան, և կազմած ի վրանի ժամուն »:

Ուղղ. « Որ առնուցոս . . . զոր ինչ խորհիցիմք գործել . . . կցուածոյ կամ սկսուածոյ կազմութեան նաւին . . . որ եղև զարդարող . . . կազմածի վրանի ժամուն »:

Սկիզբն կ'ըսենք մէկ բանի, երբ արդէն մտքի մէջ առեր ենք և մտածեր ենք զործել (ոչ ներգործել ուրիշի վրայ՝ ի կառողութեան, քանի որ մտքէն խորհածը չէ անցեր գործի, իրականութեան. այս վրիպակը ուղղադարձ է արդէն Նորայր, Բառաքան. էջ 67): Սկիզբն կցուածոյ կամխքի մասանց կամ սկիզբն սկսուածոյ մէկ բանի ինչպէս հեղինակս կը բացատրէ նաեւ այլ տեղեր. հմտ. « Եւ յառաջին նուագին ի սկիզբն սկսուածոյ գործոյն » (էջ 165. տող 25). « Բնաւ ամենեւին և ոչ ի սկիզբն սկսուածոյն » մերձեցայ (էջ 177. տող 20) և այլուր: Նորայր կ'ընդունի կցուածոյ ըստ Անտոնանց օրինակի: Ասի սկիզբն և ճարտարութեան ինչ կամ իմաստութեան, որպէս փեսելիքին, որ զարդարող եղաւ խորանին և կազմածի իւր արուեստով:

էջ 13. տող 14. « Եւ քանզի զայս բարբառ ոչ առին ի միտ իմաստունքն Յունաց, ասել՝ թէ ընդ իսկութեան Աստուծոյ էր աշխարհս, և ոչ ասեն եթէ ի նմանէ արարաւ »:

Ուղղ. ասեն. որովհետեւ չհասկցան

Մովսէսի գրածը թէ « ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր »:

էջ 14. տող 5. « Այս ինքն յերկուս զլիաւորսն՝ որք եղին, զանձնաց եղ Աստուած զամենայն պէտս աշխարհիս, երեւոցոյ պատմութեամբն զերկինս, և եղ ընդ նմին երկրորդ նորին զերկիրս »:

Ուղղ. կազմութեամբն. վասն զի Ս. Գրոց առաջին հինգ բառերու մէջ բովանդակուած է ամբողջութիւնն արարչութեան՝ կազմութիւնն, որ են երկինք և երկիրս:

Հմտ. « Բայց թերեւս երկինք ընկալան զկատարումն արարածոց իւրեանց, և երկրի պիտոյ եւ է և կազմութիւն. քանզի չեւ եւս էր կատարեալ » (էջ 24, տող 3. էջ 28, տող 7):

էջ 20. տող 9. « Ձի ամենայն ինչ՝ որ պարզ բնութիւն է, ըստ շարժումն իւրոյ բնութեանն է յտակ, և ամենայն իրիք՝ որ թեթեւ է, ի վեր հայի գնացք իւր, և ամենայն որ ծանր է, ի խռնարհ հայի էջն իւր »:

Ուղղ. յատուկ . . . իրք:

Ամենայն պարզ բնութիւն ունի իւր յատուկ շարժումն, այն ամենայն իր, ինչ, որ թեթեւ է, և այլն:

Հմտ. Եւ իրք թեթեւք ընդ երեսս բարձրութեան երկինց վերանան. էջ 14. տ. 33:

էջ 21. տող 21. « Այլ թողցոք զնոսին մարտնչել ընդ իրեարս, զի ինքեանց զմիմեանց բանն յոյցեն և խափանեսցեն »:

Ուղղ. յոյցեն:

Երբ մարտը բոլորքի իմաստուններու մէջ, միմեանց կարծիքները պէտք է հերքեն և ջրեն, որպէս զի յաղթութիւն տալու ըլլան. իսկ սոսկ լսելով՝ զճողմս ձաղկած կը լինին:

Հմտ. « Քանզի երկրորդ իմաստուն որ կայր Յունաց, առաջին իմաստունոցն բանին քակիչ և յոճիլ լինէր » էջ 4, տող 2. Եւ անդէն իսկ « Միւս եւս դարձեալ փիլիսոփոս . . . քակեաց ընկէց և երոյծ զամենայն », էջ 21, տող 13:

էջ 23. տող 31. « Երկիր, ասէ, էր աներևոյք և անկատարաստ: Ձինչ ինչ իցեն

արդեօք միտք բանին զի ահա երկինք և երկիր միով հաւանութեամբ միանգամայն առին զիւրաքանչիւր արարածոց » :

Ուզդ. առին զկատարումն ... « Քանզի ի սկիզբն Գրոց ասաց « ի սկզբանէ աւար Աստուած զերկին և զերկիր » այսինքն, յերկուս զլիաւորսն՝ որ եղեն, զանձնաց եղ Աստուած զամենայն պէտս աշխարհիս, և երեւցոյց կազմարեամբն զերկինս, և եղ ընդ նմին երկրորդ նորին զերկիրս » էջ 14, տող 4. ուրեմն Ս. Բարսեղ հարցնելով թէ ինչ կը նշանակէ « անբեւոյթ և անպատրաստ » լինելը, քանի որ երկինք ու երկիր իւրաքանչիւր իրենց յրոտն ստացած էին, յետոյ կը շարունակէ. « բայց թերեւս երկինք ընկալան զկոտարումն արարածոց իւրոց » և որ զկնին : Անշ էջ 24, տող 3 :

Հմտ. էջ 28, տող 7 :

էջ 24. տող 8. « կատարումն երկրի զարդը բուսոց նորա են, յորժամ ազգի ազգի տունկը բոխեսցեն, և պէս պէս բոյս բողբոջաւ, ծառք ըստ իւրաքանչիւր շափոց ի բարձրաբարձ բարձունս վերացեալք կէսքն պտղաբերք և կէսքն անպտուղք. ծաղիկը իւրաքանչիւր պայծառ երբին երբին գունոց, և մարգը ըստ իւրաքանչիւր աշուշահոտ խոտոցն և արմատը ըստ իւրաքանչիւր համ՝ ազգումն ճաշակաց » :

Ուզդ. « Բարձրաբարձ քարճոսն » (նոյնպէս և էջ 49) ըստ միւս տեղեաց « ի բարձրաբարձ բարձրավանդակաց » էջ 129, տող 20. նոյնպէս « ի բարձրաբարձ բարձրութիւն ամպոց » էջ 195, տող 19. — Մարդիկը ըստ իւրաքանչիւր ... արմատը ... համապոյումն ճաշակաց » . բերնին համ տուող :

էջ 25. տող 12. « Իսկ որ եղծին և կորուսին զկեանս իւրեանց ի ճշմարտութենէ անտի, քանզի ոչ ուղղեցին զմիտս իւրեանց ի ճշմարտութեան զրոց ուսանել, այլ ինքնաբուրդի կամօք իւրեանց՝ խոտորնակ խորհրդովք յեղով տապալել կամին զբանս աստուածեղէն զրոց » :

Ուզդ. « ի ճշմարտութեան զրոց » :

Բօժարիմ փոխանակ « ինքնաբուրդի կա-

մօք » ի կարդալ ըստ լուսանցքին՝ մոռք. վասն զի միտքն է խոտորնակ խորհողը. որով անպիտանացան իմաստունքն չնաշաշել ճշմարիտ Աստուածը . մինչդեռ կամքն ընտրութեան և հաւանութեան կաւորութեան կը վերաբերի, այն ժամանակ երբ միանգամ միտքն մի որ և է իր խորհածն և ըմբռնած է : Բայց թէ որ մանր միտ դրուի բնագրին՝ ոչ կամօք և ոչ մոռք եղած լինելու է այլ քանիչ : Որովհետեւ Ս. Բարսեղ շատ անգամ կը կրկնէ թէ փլիստիպայք արարչութեան նկատմամբ « անհամ պատմութիւն, իմաստութիւն, ստայօզ ճառ ստեղծուած մտաց » շարագրեր են ճշմարտութենէ հեռու, բազում ստութեամբ :

Հմտ. « Զի յառաջին անհամ պատմութեանցն՝ որ յանկեն ի ստորեանն նոցա » (էջ 47, տող 8). « Ոն անդր թողցուք զանհամ իմաստութիւն Յունաց ստայօզսն » . (էջ 56, տող 23). « Քանզի որպէս վրիպեալքն են ստայօզ ձառքն նոցա ի մտաց ճշմարտութեան » (էջ 122, տող 1-2, և այլն) : Հետեւապէս բնագիրն ուղղելու համար ինքնաբուրդի եթէ առնուի ինքնաւորեմ, ստայօզ ձառ, կը հետեւի որ կամօքն պիտի փոխանակէ քանիչք. « Քանզի ոչ ուղղեցին զմիտս իւրեանց ի ճշմարտութեան զրոց ուսանել, այլ ինքնաբուրդի քանիչ իւրեանց ... այս քանք ասեն՝ զհիւղեայ յայտ առնեն » :

էջ 26. տող 31. « Միկն եգիտ՝ ասեն՝ զհիւղն, ոչ կարաց առանց նորա յօղել զաշխարհս երեւելի իրօքս՝ որ երեւին » :

Ուզդ. « Միկն լեւ եգիտ » : Որովհետեւ հեթանոսք կը պնդէին թէ Աստուած առանց հիւղիկն անգործ էր, և իւր կարօտութիւնը անով լցուց, ուստի միկնն որ չգտաւ չկրցաւ երեւելի աշխարհս ստեղծել :

էջ 28. տող 3. « Զի՛ն և ինչ բաւական շարժուն բանք մարդկութեան նոցա պատմել զբովանդակութիւնս բնութեանց » :

Ուզդ. « Զի չեն ինչ ... բանք մոլորութեան » :

Հարցականին պիտի հետեւէր պատաս-

խանը, որ ըստ երեւոյթին չկայ. այլ դրական զուրցուածքն է որ կը շարունակէ նա և յաջորդ պարբերութեան մէջ: Յանձանճար մտքէ ստեղծուած բանը, անշուշտ մոյսը լինելու է:

Էջ 29. տող 11. « Եւ յայսմանէ՛ զոր լուաք, յայտ եղև՝ եթէ ոչ միայն անհրեւոյթ էր երկիրը, և անպատրաստ »:

Ուղղ. « այլ և անպատրաստ »:
Որովհետեւ ջրեր ծածկելը էին՝ ուրեմն անհրեւոյթ էր. դարձեալ անոնք էին պատճառ նաեւ անպատրաստ լինելուն բուսականութեան և անասնոց համար:

Հմտ. էջ 29, տող 16:
Էջ 30. տող 15. « Ո՛ր գայլը յափըշտակողը իցեն որ ոչ ատտին հարին խնամ, և հարին հօտս ի հօտից Քրիստոսի »:

Ուղղ. կորստեան? գայլը՝ ոչ աշխարհի (աստեացս) համար չխնայեցին Քրիստոսի հօտին, այլ անոր համար որ լարութիւն և ստորիւն անոնց մէջ բոյն ղրբեր էր, և Քրիստոսի հօտին կորստեան պատճառ դարձան:

Հմտ. կաթող. Պետրոսի Բ. գլ. Բ. 1:
Հ. Գ. ՆԱԶԱԳԵՑԱՆ

Շարայարելի

ԵՒԹԵՐԻՈՍ ՇԱՅԿԱՉ

Թուրքական Ուրացողի (361-363) արքանաց մէջ, որ թաղկացած էր իմաստասերներէ և զօրավարներէ, կը գտնուէր նաեւ Հայ մը. Եւթերիոս:

Այս անճառորոշները, որ պէտք է իր դերն ունեցած ըլլայ Թուրքիոսի և Հայոց մէջ եղած յարկոյտեանց ժամանակ, աշխի մեծ եղաւ իրրեւ մարդ, քան իրրեւ քաղաքագետ:

Բայց առաքիւնութիւնը նուազ պարծանք մը չէ քան քաղաքիւնն ու մեծագործութիւնը. և հետաքրքրական կը համարուին օտար պատմի մ'այն հաստատը, որ իր նկարագրին հիացկոտ ներքողը կ'ընէ:

Այդ պատմիչն է Ամմիանոս Մարկելլի-

նոս. ի ծնէ յոյն էր, բայց գրած է լատիներէն. կ'ապրէր Դ դարուն մէջ. ձամբորդած է Հայաստան իրրեւ գիւնոր, և շատ հաւանօրէն անձամբ տեսած մեր Արշակ Բ. ք, որուն վրայ խօսած է ընդարձակօրէն: Թե՛րեւ մասամբ տեղեակ էր նաեւ հայերէնի: ԺԻ գլխուն մէջ կ'ըսէ. « Հոն կը գտնուէր աղեղնաւորաց գնդին (comitum sagittariorum) մեծագոյն մասը, այսինքն հեծեալներ՝ այսպէս կոչուած գնդին, որ կը զբոսին բոլոր ազնուական բարբարոսները՝ որ ուրիշներէն վեր են իրենց զէնքերովն և ոյժերու զօրութեամբը »:

Աղեղնաւորաց գունդ թաթը ոյիւն ունի յատուկ՝ որպէս զի հարկ ըլլար ըսել՝ « այսպէս կոչուած գնդին », ուստի ներպագի գիտնականը կ'ոգնէ հասկնալ « Աղեղնաւոր կոմսեր »: Բայց Հայոց մէջ դեռ ես չեմ տեսած կոմս թաթի գործածութիւնը, և այս տիտղոսը այնքան մեծ էր՝ որ անհասանկարն է գունդ մ'ենթադրել, ուր ամեն գիւնոր կոմս կոչուի: Comites թաթին մէջ հայերէն գունդ թաթը կը տեսնենք. բերես գունդ արշաղանեաց թաթը (comites arsakidorum) չհասկցող ընթերցողներու շնորհիւ՝ եղած է « comites sagittariorum ». Ամմիանոս Մարկելլիոս կը յիշէ թէ Պարսից Բագատրները Saansah (Շահնահ) և Perozes (Պերոզ-յարոզ) կը կոչուին: Արեւելեան իրաց տեղեակ մ'է, որուն մէկ էլը այստեղ կը ներկայացնենք:

Ս. Տ.

« Կոստանդ տարածուած լուրերէն իմանալով որ Մարկելլոս օգնութիւն չէ տարած Սենտիայի քով պաշարուած Կեսարու (Յուլիանոսի), Մարկելլոսը պաշտօնանկ ընելով, իր տունն երթալ հրամայեց »:

Որ, իբրեւ ծանր անիրաւութեան մը զոհ գացած, ոճիր մը կը մեքենայէր Յուլիանոսի դէմ, վստահելով կայսեր ակնաջնջութուն վրայ՝ որ ամէն բանի բաց էին:

Ուստի, երբ նա մեկնեցաւ, իր ետեւէն ուղարկուեցաւ Եւթերիոս սենեկապանը, որպէս զի զայն յաղթահարէ, եթէ նա սուտեր հնարէ: